

ԱՄԱԼԵԱ ԵՐԱՆՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոքամյանի ամփան
տնտեսագիտության իմաստիուտի ասպիրանտ

ՆՈՐԱՄՈՒԾՎԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Նորամուծական գործնթացների կարգավորմանն ուղղված քաղաքականությունը նպատակ ունի լուծել տնտեսության զարգացման ընթացիկ և հեռանկարային բազմաթիվ խնդիրներ:

Այդ քաղաքականությունը ներառում է արտադրանքի և ծառայության նոր տեսակների բողարկման, նոր տեխնոլոգիաների ներդրման և դրանց հիման վրա վաճառահանման շուկաների ընդլայնման նպատակով արտադրության վրա ազդեցության ձևերի, մեթոդների և ուղղությունների ամբողջությունը:

ՀՀ պետական նորամուծական քաղաքականության հիմնական ուղղությունները նախանշված են «Ազգային ինովացիոն համակարգի ձևավորման 2005-2010 թթ. ծրագրում», որտեղ ընդգծվում է, որ ինովացիոն հիմքի վրա կարող է կայուն տնտեսական աճ ապահովել հիմնարար հետազոտությունների և կիրառական մշակումների, գիտության և արտադրության զարգացման, դրանց միջև գործնական կապերի խորացման միջոցով¹:

Այս ծրագրի իրականացման շրջանակներում նորամուծական քաղաքականության վարման և նորամուծական ենթակառուցվածքի ձևավորման ճանապարհին կարևորվում է զարգացած երկրների փորձի ուսումնասիրությունը: Առավել ուսանելի և հետաքրքիր է գիտական հետազոտությունները բարձրակարգ ապրանքների և ծառայությունների վերածելու գործնթացում ծագած խնդիրների ուսումնասիրությունը: Այս տեսանկյունից էլ շուկայում առկա տեխնոլոգիաների ուսումնասիրության, դրանց ընտրության, կիրառման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ նպատակահարմար է տեխնոլոգիական ինտեգրման հիմնահարցի քննարկումը: ՀՀ-ում գիտական հետազոտությունների և մշակումների կազմակերպման և կարգավորման գործնթացների ուսումնասիրությունը և քննարկումն անհրաժեշտ է նորամուծական քաղաքականության ձևավորման նպատակով: ՀՀ-ում գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող գիտական կազմակերպություններն ու ձեռնարկությունները ներառում են գիտահետազոտական ինստիտուտները, շինարարական նախագծային և նախագծահետախուզական կազմակերպությունները, փորձարարական գործարանները, որոնց արտադրանքը չի արտահանվում, ԲՈՒՀ-երը, գիտահետազոտական, նախագծանարարագիտական և տեխնոլոգիական աշխատանք կատարող արդյունաբերական ձեռնարկությունների գիտատեխնիկական ստորաբաժանումները և բոլոր կազմակերպությունների այն ստորաբաժանումները, որոնք կատարում են հետազոտություններ և մշակումներ:

Հայտնի է, որ գիտական հետազոտությունների և մշակումների վրա կատարված ծախսերի մեծությունը կարևոր ցուցանիշ է համարվում մրցակցային հնարավորությունները գնահատելու գործնթացում: Սակայն առավել կարևոր է տնտեսավարող սուբյեկտների ընդունակությունը՝ հետազոտողների և մշակողների նվաճումները վերածելու շուկայի պահանջները բավարարող ապրանքների և ծառայությունների: Վերջին հաշվով բոլորին հետաքրքրում է, թե ինչ են ստանում ընկերությունները այն ֆինանսական և աշխատանքային ռեսուրսների փոխարեն, որ ծախսվում են գիտահետազոտական և փորձակենստրուկտորական աշխատանքների վրա:

¹ ՀՀ կառավարության որոշումը, 28 սեպտեմբերի 2005թ. N 1729-Ն հավելված 1, էջ 1:

Զարգացած երկրներում կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ շատ դեպքերում բարձր արդյունավետ հետազոտությունների բանալի կարող է լինել տեխնոլոգիաների ինտեգրման գործընթացում ցուցաբերվող գերազանցությունը: Վերջինս կարող է առավելություններ հաղորդել մշակումների արագացման և արտադրանքի բարձր որակի ապահովման ուղղությամբ:

«Տեխնոլոգիական ինտեգրումը» տնտեսավարող սուբյեկտների կողմից ապրանքների, ծառայությունների արտադրական գործընթացների վերամշակման համար օգտագործվող տեխնոլոգիաների ընտրության և ուղղորդման գործընթացն է: Տնտեսությունում հզոր հետազոտական ներուժի առկայությունը իիարկե շատ կարևոր գործոն է, սակայն եթե տնտեսավարող սուբյեկտները կիրառում են այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք վատ են համակցվում, համընկնում միմյանց հետ, ապա քողարկվող արտադրատեսակները կարող են լինել շատ աշխատատար, շուկա դուրս բերելու ժամկետները՝ երկար և հետևարար դժվար կլինի հասնել նախանշված նպատակներին:

Տեխնոլոգիական ինտեգրման գործընթացը սկսվում է գիտահետազոտական փորձակոնսորտիվորական (ԳՀՓԿ) աշխատանքների ամենավաղ փուլերում: Այն կանխորշում է արտադրության, նախագծման և մշակման գործողությունների ամբողջ պլանը: Այն ապահովում է նաև հետագա կազմը հետազոտությունների ոլորտի, արտադրության և արտադրանքի շարժի միջև:

Տեխնոլոգիաների ինտեգրումը զարգացման տարբեր փուլերում էլ մեծ նշանակություն է ունեցել մրցակցային տնտեսության ճևավորման գործում, սակայն վերջին տարիներին դրա կարևորությունն առավել մեծացել է:

Այս գործընթացի պատճառներից մեկն այն է, որ ընդլայնվել է ընկերություններին հասանելի տեխնոլոգիաների շրջանակը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների, էլեկտրոնիկայի և այլ ոլորտների գիտական հայտնագործություններն ու նվաճումները հանգեցրել են նրան, որ տնտեսության տարբեր ոլորտների, այդ թվում ծառայությունների, տեխնոլոգիական բազայի փոփոխությունները կատարվում են շափազանց արագ և անսպասելի, նույնիսկ մեկ արտադրանքի արտադրության կամ ծառայությունների մատուցման շրջանակներում ավելացել է օգտագործվող տեխնոլոգիաների բազմատեսակությունը: Օրինակ՝ ժամանակակից համակարգչում օգտագործվել են բնական գիտությունների գրեթե բոլոր ոլորտների ծերքերումները: Միջուկի բաժանման տեսությունը օգտագործվել է դիմամիկ հիշողության արտադրության մեջ(DRAM), գրաֆների տեսությունը՝ ծրագրային ապահովման մեջ, որն այդ հիշողության մեջ է ձայնագրվում: Ներկայումս ոչ մի տնտեսավարող սուբյեկտ չի կարող ինքնուրույն հետազոտություններ կատարել այդ բոլոր ոլորտներում:

Միևնույն ժամանակ նշանակալիորեն մեծացել է այն աղբյուրների թիվը, որոնցից տնտեսավարող տարբեր սուբյեկտները կարող են վերցնել/գնել/ անհրաժեշտ ժամանակակից տեխնոլոգիաները: Ծովայի յուրաքանչյուր մասնակից պետք է մշտապես որոնի հերթական տեխնոլոգիական ճեղքման ուղղությունը: Իր սեզմենտում, առաջատար ընկերությունը, եթե ժամանակին շիայտնաբերի նոր, կարևոր ռեսուրսը կամ շուկայի չզրադեցված հատվածը, ապա մրցակիցները կօգտվեն դրանից և ճեղք կրերեն որոշակի առավելություններ:

Իրադրությունն ավելի է բարդանում նրանով, որ արտադրանքի կենսապարբերաշրջանը որոշակիորեն կրճատվել է, որն էլ տնտեսավարող սուբյեկտներին ստիպում է անդադար արագացնել մշակումները և նորույթների մուտքը շուկա: Հայտնի է, որ ցանկացած ապրանք կամ ծառայություն անցնում է մի շարք փուլերով: Ժամանակի որոշակի փոխկապված երևույթների, գործընթացների, աշխատանքների ամբողջությունը, որ ձևավորում է զարգացման ավարտուն շրջան, ներկայացվում է որպես պարբերաշրջան: Նորամուծության կենսապարբերաշրջանը ժամանակի որոշակի հատված է, որի ընթացքում նորամուծությունն ունի կենսական ուժ և արտադրողին կամ վաճառողին բերում է շահույթ կամ այլ օգուտ: Կենսապարբերաշրջանի

հայեցակարգը կարևոր նշանակություն ունի նորամուծության արտադրության, պլանավորման և նորամուծական գործընթացի կազմակերպման համար: Այս տեսությունը տնտեսավարող սուբյեկտին հնարավորություն է տալիս վերլուծել տնտեսական գործունեությունը ինչպես ներկա ժամանակի, այնպես էլ դրա զարգացման հեռանկարի տեսակետից: Այս տեսությունը հիմնավորում է նորամուծական գործունեության պլանավորման ուղղությամբ պարբերական աշխատանքների անհրաժեշտությունը: Նորամուծությունների կենսապարբերաշրջանի հայեցակարգը նորամուծական գործընթացների կազմակերպման, կարգավորման և վերլուծության մեխանիզմների հիմքն է:

Ապրանքների և ծառայությունների կենսապարբերաշրջանի կրճատումը տնտեսավարող սուբյեկտներին ստիպում է անդադար անդրադարձ կատարել կենսապարբերաշրջանի հայեցակարգային դրույթներին:

Ամերիկյան գիտնականների ուսումնասիրությունները վկայում են, որ կիսահաղորդիչների արտադրության մեջ միայն 1980-ական թթ. կենսապարբերաշրջանը կրճատվել է 25%-ով¹:

Միաժամանակ շուկայական միջավայրում զգալիորեն ավելանում է անորոշությունը: Ինչպես օրինակ՝ համակարգիչների արտադրության ոլորտում, որտեղ շուկայական պահանջները փոփոխվում են շափականց արագ, իսկ սպառողները երբեք բավարարված չեն լինում իրենց ունեցած հաշվողական միջոցների արտադրողականությամբ: 1990-ական թթ. կեսերին, ոչ ոք չէր կարող ենթադրել, թե ինչպես կազմեն սպառողական պահանջարկի վրա այնպիսի գործուներ, ինչպիսիք են՝ ինտերնետի զարգացումը, համակարգչային սարքավորումների գների ովինամիկան կամ ծրագրային նոր լեզուների ի հայտ գալը:


Միաժամանակ ժամանակակից տնտեսության մեջ փոփոխվել է մրցակցության բնույթը: Ներկայումս մրցակցային առավելություններ են ստանում այն ընկերությունները, որոնք առաջարկող բազմաթիվ տարրերակներից առավել արդյունավետ են կազմակերպում անհրաժեշտ տեխնոլոգիաների ընտրությունը: Տնտեսական զարգացման ընթացքում միշտ չէ, որ հաղող են դառնում այն սուբյեկտները, որոնք իրենք են մշակում տեխնոլոգիաները:

Ժամանակակից շուկայական տնտեսության մեջ մրցակցային ունակությունների մեծացման գործում կենսականորեն կարևոր են տեխնոլոգիական ինտեգրման գործընթացները: Օրինակ՝ 1990-ական թվականներին այդ գործընթացների վերակազմակերպումը բազմաթիվ զարգացած երկրներում կարևոր գործոն դարձավ համակարգչային արտադրանքի շուկայի բուռն զարգացման համար:

Տեխնոլոգիական ինտեգրման որոշակիորեն ընտրված ուղին ներդաշնակորեն պետք է զուգակցվի տնտեսավարող սուբյեկտի հնարավորությունների, կառավարման և կարգավորման ձևավորված մեխանիզմների և շուկայական պայմանների հետ: 1960-1970-ական թվականներին մի շաբթ զարգացած երկրներում տեխնոլոգիական ինտեգրումը իրականացվում էր հետևյալ կերպ: հետազոտողների խումբը ուսումնասիրում, վերլուծում էր տեխնոլոգիական նոր նվաճումները և որոշում, թե որանցից որը կարող է օգտագործվել տվյալ տնտեսավարող սուբյեկտի մշակող մասնագետների կողմից: Դրանից հետո մշակողները կատարելագործում էին սկզբնական տեխնոլոգիան և այն հանձնում արտադրության բաժին, որտեղ այն վերջնականորեն հղկվում էր: Այսպիսի սխեման չէր նախատեսում կամ առանձնացնում այնպիսի տարրեր փուլեր, որտեղ կարելի էր գնահատել ընդհանուր նախագիծը՝ ամբողջությամբ: Այդ պատճառով էլ տեխնոլոգիայի ընտրությունը հաճախ կատարվում էր անհաջող: Ավանդականորեն դերերը բաժանվել էին գիտահետազոտական խմբերի և մշակող մասնագետների միջև: Առաջինները գնահատում էին սահմանափակ թվով տեխնոլոգիաների հավաքածուի հնարավորությունները, երկրորդները գյուղայուն ունեցող տեխնոլոգիաները արտադրողների համար վերափոխում էին կոնկրետ մշակումների: Պատահականություններից կախված այսպիսի մոտեցումը երբեք

¹ Marco Iangiti – Technology Integration: Making Critical Choices in a Dynamic World, HBC Press 1997.

արդյունավետ չէր կարող լինել: Դրա թերությունները երևացին միայն 1980-ական թվականներին, երբ փոփոխվեց մրցակցության բնույթը: Այս դեպքում պարզ մասնագիտացումը միայն առանձին փուլերի համար բավարար չէր: Անհրաժեշտ էր նոր մոտեցում, որը հնարավորություն կտար լրացնել այն բացը, որը բաժանում էր հետազոտությունները և մշակումները: Առանց այսպիսի սխեմայի անհնար էր բարձրակարգ հետազոտությունները վերածել նույնքան բարձրակարգ արտադրանքի և գործընթացների: Ավանդական, ճյուղային լաբորատորիաները չեն լուծում այս խնդիրը: Դրանք ստեղծվում էին՝ նպատակ ունենալով սահմանազատել հետազոտական կազմակերպություններն ամենօրյա հոգսերից և բիզնեսի հիմնախնդիրներից և հնարավորություն տալ գիտնականներին իրենց ուժերը կենտրոնացնել բացահայտումների և կարևոր տեխնոլոգիական հայեցակարգերի ձևակերպման վրա: 20-րդ դարի վերջին տասնամյակներում հաջողության հասան այն տնտեսավարող սուբյեկտները, որոնք կարողացան հեռու կանգնել գիտահետազոտական փորձակոնստրուկտորական աշխատանքների ավանդական մոդելից և ձևավորեցին դրանից արմատականորեն տարրերվող նոր մոդել: Նրանք շիրաժարվեցին գիտական հետազոտություններից, այլ տեղափոխեցին ուսումնասիրությունների կենտրոնը կիրառական գիտության կողմը: Բացի այս նրանք, որպես գործընկերներ և մատակարարներ, ներգրավվեցին տարրեր կազմակերպություններ, այդ թվում՝ համալսարաններ, ճյուղային գիտահետազոտական հաստատություններ և այլ ընկերություններ: Այս դեպքում տեխնոլոգիական հնարավորությունների որոնումը տեղի էր ունենում համատեղ ուժերով: Ավելին, ընկերությունները, տեխնոլոգիական ինտեգրման նպատակով, սկսեցին ձևավորել փորձագետների թիմեր, որտեղ ներգրավվում էին հետազոտությունների, մշակումների և արտադրության գծով մեծ փորձ ունեցող մասնագետներ: Սրա արդյունքում ընկերությունները հնարավորություն ունեցան ստեղծելու նոր սերնդի արտադրատեսակներ և գործընթացներ: Ինտեգրման այդ մասնագետներին կոչում են տարրեր կերպ՝ «պրոցեսային ինտեգրող» կամ «ծրագրի դեկավար»: Սակայն բոլոր դեպքերում նրանք իրականացնում են գրեթե նույն գործառույթները: Ինտեգրողների թիմը համակարգային վերլուծության է ենթարկում ամբողջ նախագիծը և կանխատեսում դրա հեռանկարային զարգացումը: Նրանք էական անկախություն ունեն արտադրանքի նոր սերունդների մշակման ընդհանուր հայեցակարգի և անհրաժեշտ տեխնոլոգիաների ընտրության հարցում: Անհրաժեշտ է, որ ապրանքը կամ ծառայությունը, որը ստեղծվել է ընդհանրական հայեցարկագի հիման վրա, համապատասխանի սպառողների պահանջներին, և դրա արտադրությունն ընթանա արագ և արդյունավետ: Փաստորեն ինտեգրողների թիմն է կրում հայեցակարգի համակողմանի ձևավորման պատասխանատվությունը: Այդ մարդիկ սերտորեն համագործակցում են մշակողների հետ՝ օգնելով նրանց կատարելագործել արտադրանքը և արտադրական գործընթացը: Տնտեսավարող սուբյեկտների կազմում գտնվող ճյուղային բազմաթիվ գիտահետազոտական կազմակերպություններ և խմբեր ստեղծում են նորանոր տեխնոլոգիական հնարավորություններ: Ինտեգրողների թիմը ուսումնասիրում է այս տեխնոլոգիական հնարավորությունները, կատարում ընտրություն, կատարելագործում է ընտրված լուծումը՝ օգտվելով հարուստ փորձարարական տեխնիկական բազայից: Ընկերությունները նրանց տրամադրում են մեծաքանակ ռեսուրսներ՝ բազմաթիվ տեխնոլոգիական տարրերակների ստուգման և վերլուծության նպատակով: Այս նույն թիմը համատեղ աշխատում է մշակողների հետ նոր սերնդի արտադրանքի կամ գործընթացի ստեղծման համար: Մշակողները, որոշ դեպքերում նաև մատակարարները, պատասխանատվություն չեն կրում առանձին բաղադրիչների համար, բայց ամբողջ ծրագրի համար լիովին պատասխանատու են ինտեգրողները: Տեխնոլոգիական ինտեգրման այսպիսի մոտեցումը շատ արդյունավետ է հեռանկարային տեխնոլոգիաների որոնման և դրանց հիմնա վրա արագ որոշումներ կայացնելու տեսակետից: Այդպիսի մոտեցումը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերով՝



Ինտեգրող քիմը նոր տեխնոլոգիաները հարմարեցնում է այն բազային, որն ընկերությունն արդեն հաջողությամբ յուրացրել է: Ավելին, այդպիսի քիմը կատարելագործում է եղած համակարգերը՝ հնարավորություն տալով օգտագործել նորամուծությունները առավելագույն արդյունավետությամբ: Թիմի անդամները ներառվում են փոխկապակցված ծրագրերի հոսք՝ ձևավորելով կոորդինացված ստորաբաժանում, որն անդադար զարգանում է՝ անցնելով մի ծրագրից մյուսին:

Այս եղանակով գործընթացի կազմակերպումը նախատեսում է տեղական պայմանների ակտիվ օգտագործում, նաևնավորապես՝ աշխատուժի մեծ շարժունակությունը և այնպիսի խոչոր ռեսուրս, ինչպես առաջնակարգ համալսարանների հետազոտական ունակությունները: Այս դեպքում այլև չի նկատվում մի ծրագիրը մյուսից հետո հաջորդաբար իրացնող մշտական թիմերի ձևավորման անհրաժեշտությունը: Տեխնոլոգիական ինտեգրման նոր ձևավորվող քիմերում յուրաքանչյուր ծրագրի համար քիմ են հրավիրվում նոր կադրեր՝ մասնագետներ, որոնք արդեն նաևնակցել են ուսումնական կամ առևտրային կազմակերպությունների համապատասխան ուսումնասիրություններին: Տնտեսագետները նշում են տեխնոլոգիական ինտեգրման թիմերի ձևավորման գործընթացի տարրերություններն առանձին երկներում¹: Օրինակ՝ վերը նշված մոդելը դժվար է կիրառել ճապոնիայում, որտեղ պակաս է համալսարանական ուսումնասիրությունների փորձը: Ինտեգրողների ճապոնական թիմում գիտական աստիճան ունեցող մասնագետների թիվն ավելի պակաս է, քան ամերիկյան ընկերությունների համանման թիմերում: Կորեական ընկերություններն օգտագործում են մեկ այլ միջամկյալ սխեմա: Այդ երկրում ընկերությունների աշխատակիցները որպես կանոն երկարատև աշխատանքային փորձ ունեն տվյալ ընկերությունում: Սակայն ծրագրերում ընդգրկվելու համար դեկավարությունը հաճախ մասնագետներ է հրավիրում այլ երկրներից՝ առավելապես ԱՄՆ-ից: Ընդ որում, գիտական աստիճան ունեցող աշխատակիցների տեսակարար կշիռը որոշ դեպքերում հասնում է 50%-ի: Այսինքն՝ կորեական ընկերությունները, ի տարրերություն ճապոնականի, բավականչափ կադրային ռեսուրսներ են ներգրավում դրաց: Պատահական չե, որ ճապոնացիներն ու կորեացիները մասնագետների պատրաստմանն ավելի մեծ միջոցներ են ուղղում, քան նրանց ամերիկյան մասնակիցները: ԱՄՆ-ում գործող ընկերությունները, որպես կադրերի աղյուր, ակտիվորեն օգտագործում են համալսարանները՝ ձևավորելով մասնագետների թիմեր, որոնք

¹ Stefan H. Thomke, Eric A. von Hippel, Roland R. Franke. "Modes of Experimentation: An Innovation Process Variable" Harvard Business School Working, 1997.

հետազոտությունների և մշակումների տվյալ ծրագրերի շրջանակներում ունակ են լուծել կոնկրետ խնդիրներ: Ծապոնական և կորեական ընկերությունները հենվում են իրենց այն աշխատակիցների ուժերի վրա, որոնք արդեն մասնակցել են արտադրանքի նախորդ սերունդների մշակմանը: Այդ վետերանների փորձի և ինտուիցիայի շնորհիվ է, որ նախագծող թիմները սովորաբար ավելի քիչ փորձեր են կատարում:

ԱՄՆ-ում այլ իրավիճակ է. այստեղ ընկերությունները գիսավորապես հենվում են քիմ իրավիրքած նոր անդամների գիտելիքների վրա: Այս գիտելիքների օգտագործումն էականորեն բարձրացնում է որակական և արտադրողական ներուժը: Սակայն մինչև այդ նորամուծությունների իրականացումը, դրանք անհրաժեշտ է բազմաթիվ անգամներ և հանգամանորեն թեստավորել: Հենց այդ պատճառով էլ ամերիկյան ծրագրերում փորձարարական բաղադրիչը ավելի մեծ է, քան ճապոնական կամ կորեական ծրագրերում: Հետազոտությունների և մշակումների ընթացքում ծրագրային թիմների մոտ փորձի գնահատման տարրերությունները պայմանավորում են կարգավորման տարրեր մեխանիզմների ձևավորումը գիտելիքների արտադրության մեջ:

ԱՄՆ-ի, ճապոնիայի, Կորեայի տարրեր ընկերությունների հաջողությունները չի կարելի բացատրել միայն տեխնոլոգիական ինտեգրմամբ: Օրինակ՝ կիսահաղորդիչների արտադրության վերելքը ԱՄՆ-ում անհնարին կլիներ, առանց այնպիսի գիտական հիմքի, ինչպես 1980-90-ական թվականներին տարրեր համալսարաններում և լաբորատորիաներում կատարված բացահայտումները: Այնուամենայնիվ, առանց տեղական պայմանները և ավանդույթները հաշվի առնող տեխնոլոգիական ինտեգրման, ամերիկյան ընկերությունները չեն կարող օգտվել այդ գիտական հիմքի առավելություններից:

Հետազոտական աշխատանքով կուտակված ներուժի իրացումը կարող է որոշիչ դառնալ՝ բազմաթիվ ոլորտներում հաջողության համար: Ինտերնետի համար ծրագրային ապահովման ստեղծումը կամ էլ չիպերի արտադրությունը բիզնեսի տարրեր տեսակներ են: Նման չեն նաև դեղագործությունը և արդյունաբերական նյութերի վերամշակումը: Սակայն այդ բոլոր ճյուղերն էլ ունեն ընդհանուր հիմնախնդիրներ, այն է՝ նոր տեխնոլոգիաների ստեղծումը և դրանց կիրառման հնարավոր շրջանակների բացահայտումը: Այս դեպքում չափազանց կարևոր է դառնում տնտեսավարող սուրյեկտի ընդունակությունը՝ օպտիմալ կերպով ինտեգրել ունեցած տեխնոլոգիաները: Շուկայի տարրեր հատկածներում ամերիկյան հաջողակ ընկերությունները կիրառում են միևնույն մարտավարությունը: Նրանք թիմներ են ձևավորում այն մասնագետներով, ովքեր տիրապետում են համապատասխան ամենաժամանակակից գիտական գիտելիքների, և այդ մասնագետներին տրամադրում են բավականաչափ ռեսուրսներ՝ տեխնոլոգիական տարրեր ուղղությունների ուսումնասիրման և թեստավորման համար:

Տեխնոլոգիական ինտեգրման միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ այդ գործընթացի արդյունավետությունը կախված է բազմաթիվ գործոններից, այդ թվում՝ աշխարհագրական, մշակութային միջավայրից, աշխատանքի տեղական շուկայից և այլն:

Յուրաքանչյուր երկրի գիտահետազոտական բազան, ներառյալ համալսարանների և տարրեր լաբորատորիաների ցանցը, քանիքարժեք ազգային ունեցվածք է, որի զարգացման և ընդլայնման գործին պետք է ակտիվորեն մասնակցեն ինչպես մասնավոր հատվածը, այնպես էլ պետական կառույցները: Զեավորելով այնպիսի գործընթացներ, որտեղ հետազոտական բազայի հենքը գուգակցվում է գոյություն ունեցող և զարգացող շուկաների միտումների հետ, տնտեսավարող սուրյեկտներն իրենց և ամբողջ երկրի համար բարենպաստ դիրքեր են ապահովում՝ մշտապես բարդացող բարձր տեխնոլոգիական աշխարհում: